

Զ Հ Ո Ի Դ - Ք Ո Ի Շ Ա Ն

(Հրէասպանութիւն)

Վ Է Գ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԿԵԱՆՔԻԾ

I

Մահմադ Շահ Ղաջարի թագաւորութեան վերջին տարիներն էին:

Արքաների արքան, շահնշահը, Աստուծու ստուերը երկրի վրայ, աշխարհի աղօթարանը, իմաստութեան, հանճարի, գեղեցկութեան, բարութեան քուրան¹⁾ արդէն հրաման էր տուել, որ բարխանները²⁾ ճանապարհ դրուեն դէպի Դամավանդի բարձունքը, ուր նա մտադիր էր պատուարուել ամարային տօթերից ծիրանադոյն վրանների տակ և հանգստանալ հարեմական զուարճութիւնների ծոցում: Հարեմը արդէն քեաջավաններով, թախտրավաններով³⁾, ներքինիների և Ղըզլար-Աղասիի⁴⁾ ընկերակցութեամբ Մունէջիմ բաշու⁵⁾ բարեգուշակ յայտարարութիւնից յետոյ ճանապարհ էր ընկել: Արեգակնափայլ Շահը այս անգամ չափաւորութեան մեծ օրինակ էր ցոյց տուել. հարեմի 400 կա-

1) Պարսից Շահի տիտղոսներն են: 2) Ցան իրեր, կահ կարասի: 3) Պեաջավա, թախտրավան, ամենահին ժամանակից Պարսկաստանում դործածուող վանդակաձև անանիւ կառքեր են, որոնցով ճանապարհորդում են. քեաջավան բաղկացած է երկու վանդակից և զցում է ջրու վրայ, իսկ թախտրավանը մի մեծ վանդակ է, որ տանում են երկու ջրի կամ ձի: 4) Ներքինապետ: 5) Գլխաւոր աստղագէտ, որ ամեն մի Շահ ունի: Յունուար, 1902.

նանցից միմիայն 200-ը պէտք է արժանանային քաղցրացնել իրանց տիրոջ սիրտը և ծառայել նրան. մնացածը պէտք է մնային Թէհրանում և երկրորդ Ղզլար-Աղասիի հսկողութեան տակ գիշեր և ցերեկ աղօթէին Աստուծու ստուերի կեանքի երկարութեան համար:

Մի գարնանային օր էր, մայիս ամսի սկիզբները, երբ Թէհրանում արդէն սկսւում է տօթը: Ձը նայելով որ դեռ առաւօտ էր, օդը չափազանց հեղձուցիչ էր. փողոցները փոշոտ և գարշահոտ ապականութիւններով լի: Սակայն քաղաքի գլխաւոր փողոցներից կամ խիաբաններից մէկի վրայ, Ալա-Դօվլա խիաբանի վրայ մեծ շարժում և իրարանցում կար: Դա այն փողոցն էր, որով Շահը պէտք է իր պալատից անցնէր և դուրս գար քաղաքից: Խիաբանի երկու կողմով ընկած ծառուղիները բաց էին անում իրանց արանքում մի լայն ճանապարհ, որ եւանդուն կերպով ջրւում էր ծառուղիների երկարութեամբ ձգուող բաց ջրանցքներից սաղկանների ¹⁾ ձեռքով: Փէրրաշները՝ ճիպոտները ձեռին, կտորմազգեստ ու խայտաճամուկ փետրաւոր գլխարկներով զարդարուած շաթիրները իրանց հաստ և արծաթապատ գաւազաններով վազվզում էին խիաբանի միջոցով և իրանց սպառնական հայեացքներով հալածում անցորդներին: Ճիպոտները երբեմն-երբեմն բարձրանում և ընկնում էին անզգոյշ անցորդների ուսերի վրայ: Վեղէր-սուխտաներ ²⁾, գոռում էին շաթիրները և ֆէրրաշները, ճիպոտի հարուածներից ուսերը դադուած անցորդների ուֆը լսելով,—կամենում էք ֆալսիկայի մէջ չորացնենք ձեզ. կորէք այստեղից: Միայն սև չարշաւների մէջ տուգած և ուրբանդով ³⁾ երեսները օտար տղամարդի հարամ նայուածքից թազցրած կանայք, առանց երկիւղի, անցնում են խիաբանով անպատիժ, լաւ իմանալով, որ ոչ ոք չի համարձակի վի-

¹⁾ Ջրկիր. ջուրը ածում են կաշուէ տիկերի մէջ: ²⁾ Ղալրդարուած՝, —հայհոյանք, որ նշանակում է թէ հայրը այրուել է դժոխքում: ³⁾ Գօշ, որով պարտիկ կանայք ծածկում են երեսները:

բաւորել իրանց: Կնոջ խփելը համարուում է տմարդուն-
թիւն և արգելուած է Ղուրանից:

— Իբրահիմ, շնջաց մի շաթիր իր ընկերին, արե-
ւիգ խաթեր, մի այստեղ նայիր. ախ, կեղծաւոր, խա-
բերայ:

Եւ այդ խօսքերը արտասանելով հանդերձ, հա մի
խոր գլուխ տուեց խիարանով անցնող և սպիտակ էշի
վրայ հեծած մի մօլլայի, որ ջուբբան ¹⁾ քաշել էր գըլ-
խին. սուրբ մարգը, ամբողջովին անձնատուր եղած վե-
րացական և հոգեշահ մտածողութիւնների, խլացրել էր
ականջները, ծածկել աչքերը, որպէս զի, նահլաթ չար
սատանային, որևէ պիղծ բան չը տեսնի, երկրային
մնտի խօսակցութիւն չը լսի և, մանաւանդ, քեաճիք-
գեաճուրի չը պատահի: Նրա բոլոր հագուստները—
վարտիբը, ջուբբան, ամմաման ²⁾ ձիւնի պէս սպիտակ
կտորից էին,— առաքինութեան, անմեղութեան և ա-
նարատութեան նշաններ: Էշի սանձից բռնած, առաջից
գնում էր մի գեղեցկատեսիլ պատանի, որ սուրբ մարգին
և ծառայում էր, և Ղուրանի, մարգարէներին, իմամների ի-
մաստութիւնները ու հադիսները ³⁾ սովորում նրանից...
Ամբօխը, պատկառանքի և մեծարանքի ամենամեծ նը-
շաններով, մօտենում էր էշի վրայ հեծած մօլլային և
համբուրում շորերի քղանցքները: Դա՛ թէհրանի իմամ-
Ջուման էր, Հաջի Միրզա Ջաւադ աղան, որ հոչակ-
ուած էր իր օրէնսգիտութեամբ և շարիաթի կանոննե-
րի խիստ պահպանութեամբ: Նրա ետևից մի ծառայ
էր գնում զայլանը ձեռքին բռնած. ապա հետևում
էին մի խումբ միրզաներ ⁴⁾, թալաբաներ ⁵⁾ և ծա-
ռաներ:

Իմամ-Ջուման գնում էր Շահաբդուլ-ազիմ ուխ-
տատեղին՝ աղօթելու:

Նա մօտ 50 տարեկան մի անձն էր, հիւժուած.

¹⁾ Վերարկու ²⁾ Գլխի փաթաթոց ³⁾ Պատգամ ⁴⁾ Գրագիր ⁵⁾ Աստ-
ածարանութեան ուսանողներ:

մաշուած. հաւատացեալները և թալարաները ասում էին, որ աքնութիւնից, գիշեր-ցերեկ աղօթելուց է նա հիւժուել և մաշուել. աչքերը խոր էին ընկել, գլուխը բոլորովին ածելած էր, իսկ մօրուքը, ալեխառն, հասունում էր մինչև գօտին, որի անհամար ծալքերի մէջ խրուած էր մի փոքր ձեռագիր զուրան. Բոլոր գէմքը արտայայտում էր մի տեսակ դժնդակ, խիստ, անգուժ տրամագրութիւն. աչքերի մէջ երբեմն-երբեմն վազում էր մի մոլի կայծ, որը, սակայն, իսկոյն հանգչում էր, և աչքերը իրանց առաջուայ պաղօթիւնն ու անշարժութիւնն էին ստանում: Թէև էլի վրայ նստած և նրա գլուխը ծածկուած էր սպիտակ ջուբբայով, բայց նա ամեն րոպէ արտասանում էր բարձրաձայն լալէ-քում-սալամ, անցորդների լալամ-ալէքումն ողջոյնին:

— Ի՞նչ անեմ, — ասաց Սէլիմ շաթիրը Իբրահիմին, երբ գնացքը անցաւ, — թող Ալլահը գոնէ մի օր, մի ժամ ինձ Շահ դարձնի և ես ցոյց կը կամ Միրզա Ջաւադ աղին, թէ նա ինչ պտուղն է: Ալլահ, Ալլահ, փառք Քեզ, փառք մարդարէին. ինչո՞ւ, Ալլահ, թոյլ ես տալիս որ այսպիսի անղգամները մուսուլմաններին խաբեն և շարիաթը ոտնատակ տան:

— Խուբ ¹⁾, ասաց Իբրահիմը, ենթադրենք, որ Ալլահը — անբաւ է նրա ողորմութիւնը — կատարեց խընդիրը և դու մի օր Շահ դարձար. էհ, ինչ կ'անես:

— Ինչ կ'անեմ, աչքերը բարկութեամբ վառուած բացականչեց Սէլիմը. ինչ կ'անեմ: Ես նրան կը տկորացնեմ և նրա մարմնի վրայ իմ այս գաւազանի միջոցով ցոյց կը տամ, թէ ինչպէս են «տկորներին» ողորմութիւն տալիս:

— Դու էլի պնդում ես ըստ ասածների վրայ:

— Թող Ալլահը խուով կենայ գլխիս, թող Ազրայիլը հոգիս առնի և ջհաննամի փայ ²⁾ դառնամ, եթէ ասածիս մէջ ստուգութիւն կայ. բայց ո՞վ է լսում խեղճ

¹⁾ Լաւ ²⁾ Դժոխքի բաժին:

շաթիրին. յոյսս մնացել է միայն հաղթէթ Աբբասի¹⁾ վրայ. նա է թշուառների և խեղճերի պաշտպանը:

—Դէ մի լաւ պատմիր, նորից լսեմ. մինչև այժմ ուշադրութիւն չեմ դարձրել ասածներիդ վրայ. դուցէ մի բան անել կարողանանք. արխային կաց, էնդէրունում²⁾ ծանօթներ ունեմ:

Եւ նստելով փողոցի դռներից մինի սաքունների վրայ, Սէլիմը մի խօր ախ բաշեց ու սկսեց.

—Դու գիտես, որ հայրս, հաճի թաղին, մի հարուստ վաճառական էր. նա աստուածաճանաչ մարդ էր. նամազ, զաքեաթ³⁾ նա ճշտութեամբ կատարում էր. շարիաթի կանոնները գրեթէ անգիր գիտէր. տարին հինգ անգամ թաղիա⁴⁾ կը սարքէր, աղքատներին ու խեղճերին կը կերակրէր. սէյիդների, մօլլանների տասանորդը իր ձեռքով կը բաժանէր: Ալլահն էլ, տեսնելով նրա մաքուր մուսիլմանութիւնը, կրկնապատկեց նրա հարստութիւնը, լցրեց նրա տունը ամեն տեսակ բարիքներով: Հէնց որ ես, նրա մինուճար զաւակը, տասնեութ տարեկան դարձայ, նա ինձ հարսանիք արեց և ինձ համար ուզեց մուշթայիդի, այդ անիծուած Իմամ Ջումայի եղբօր աղջիկը, Փաթմային. խեղճ մայրս հակառակ էր, որովհետև Փաթման շատ տգեղ և չար աղջիկ էր. ինչպէս ասում էր, նա կամենում էր ինձ համար կին ուզել գեղեցկուհի Լէյլային, մեր դրացի մաշադի Քէրիմի աղջկան. բայց ով կարող էր հակառակել հօրս կամքին. նա կամենում էր և մեծ պարծանք էր համարում բարեկամանալ Իմամ Ջումայի տան հետ: Մեր հարսանիքը կատարուեց. Փաթման իմ կինը դարձաւ. բայց ես նրան սիրել չէի կարող. նա տգեղ էր, անչնորհք, չարասիրտ. ուրիշ կին էլ ուզել չէի կարող Իմամ Ջումայի վախից. հայրս էլ թօյլ չէր տայ: Ես պատրուակ բռնե-

1) Ամենայարգի իմամներից մինը: 2) Ներքնանոց, կանանոց: 3) Կրօնական տուրք: 4) Սուգի հանդէս, չորս կրօնական մրտաբերիաներ են կատարում և հանդիսականներին կերակրում, «հոգու հաց» տալիս:

ցի, որ մեծ ցանկութիւն ունեմ գնալ ուխտ Քեալբա հազրաթ Ալու գերեզանին, խնդրեցի հօրս թոյլ տալ ինձ այդ ուխտը կատարելը. Իմամ Ջուման հաւանութիւն տուեց դիտաւորութեանս և ես ճանապարհ ընկայ Վերջապէս ես ազատ շունչ քաշեցի. մտածում էի Քեալբայից Մէքքէ գնալ. երբ զբեալբայ ու հաճի» տխրոսներն ստացած կը լինեմ արդէն, այն ժամանակ հեշտ կը լինի ինձ համար ազատուել ագեղ Փաթմայից կամ երկրորդ անգամ ամուսնանալ գեղեցիկ Լէյլայի հետ. չէ որ մեր շարիաթը հալալ է համարում չորս օրինաւոր կին ունենալը: Ես երկու տարի մնացի Քեալբայում և Մէքքայում. վերադարձայ Թէհրան հաճի Սէլիմ փառաւոր տիտղոսով, բայց, ախ, երանի թէ, հէնց մարգարէի գերեզմանի վրայ մեռած լինէի և չը վերադառնայի. Իմ բացակայութեան ժամանակ հայրս մեռել էր և կտակ էր արել, որ եթէ ես Ալլահի կամբով մեռնեմ և չը վերադառնամ, իմ բոլոր գոյքը բաժանուի զբաղեցնելին և տկլորներին». կտակակատար էր կարգել Իմամ Ջումային, իբրև շարիաթի ներկայացուցչին, այս սատանայ կեղծաւորին, որ այժմ մեր առաջից անցաւ:

Սէլիմը կանգ առաւ. դառն յիշողութիւնները կարծես ճնշում էին նրա միտքը և հոգին և նա ընկաւ խոր մտածողութեան մէջ:

— Դէ, շարունակիր, շարունակիր, ասաց Իբրահիմը կարեկցութեամբ. Ալլահ թաալան¹⁾ մեծ է և ողորմած:

— Այո, զուրբան լինեմ նրա զօրութեան. երևի ճակատագիրս այդպէս էր: Որտեղ մնացի. հա, հայրս կտակակատար նշանակել էր Իմամ Ջումային: Հաղիւ անցնում է 4—5 ամիս հօրս մահից յետոյ, Իմամ Ջուման, որ արդէն գրաւել էր հօրս բոլոր ունեցածը իբրև կտակակատար, յայտնում է մօրս, թէ իբր ես ևս վախճանուել եմ Մէքքայում. տանում է Փաթմային իր

¹⁾ Ամենագոր Աստուածը:

տունը և մի քանի հարիւր թուման փող տալով մօրս՝ յայտնում է, որ կտակի համաձայն, հօրս մնացած բոլոր կարողութիւնը, Յաթմայի քեաբինի փողն դուրս գալուց յետոյ, պէտք է բաժանի առկորներին և քաղցածներին»։ Այդ նպատակով, նա, այդ անգութը, ահանջ չը գնելով մօրս լաց ու կոծին, աղաչանքին, ծախում է հօրս տունը, գիւղը, գոյքը և փող շինում. հօրս կարողութիւնը 100,000 թումանից աւելի է լինում։

—Էհ, ինչ եղաւ. միթէ այդքան փողն էլ բաժանեց աղկորներին և քաղցածներին։

—Ինչպէս չէ, պատասխանեց հեղնութեամբ Սէլիմը, բաժանել է, բաժանել «աղկորներին և քաղցածներին»։ աղա Իմամ Ջուման «չարից»¹⁾ է արել։

—Ինչպէս, պատմիր շուտով։

—Այդ խաբեբան ամեն օր, առաւօտեան նամազը անելուց յետոյ, աղկորացնում է իր բաղմաթիւ կանանց և մանկաւիկներին և շար դցում իր մեծ սենեակում, ապա սկսում բաժանել այդ աղկորներին՝ մի-մի ոսկի. երբ նրանք շորերը հագնում են, դարձեալ այդ ոսկիները բերում տալիս են իրան։ Այդպէս շարունակում է ամբողջ երեք ամիս. բացի դրանից ամեն օր, կէսօրին, գնում է հաւերի բակը, հրամայում է հաւանացից բաց թողնել բոլոր հաւերին, որոնց սոված էին պահում մինչ այդ ժամանակ. երբ քաղցած հաւերը վրայ են թափուում, նա կուտի հետ միասին թափում է և ոսկիներ, որ դարձեալ յետ է հաւաքում։ Այդպիսով, նա կատարում է հօրս կտակը, տալով նրա փողն աղկորներին և քաղցածներին՝ ու «չարից» է անում։

—Վայ խաբեբայ, վայ սատանայ, ծիծաղեց Իբրահիմը. անիծածը ինչ խելօք է եղել. է՛հ, դու որտեղից իմացար այդ բոլորը։

¹⁾ Համաձայն շարիաթի. մահմեդական իրաւագէտների կարծիքով ամեն բան ներելի է, եթէ բառացի մտքով համաձայն է շարիաթին։

—Մօրս պատմել է Լէյլան, որ Իմամ Ջումայի սիրա կինն ¹⁾ է դարձել:

—Լաւ, հապա երբ դու եկար, չը գնացիր, չը պահանջեցիր նրանից հօրդ հարստութիւնը:

—Ինչպէս չը գնացի. սակայն նա ասաց թէ շատ ցաւում է, որ այդպէս է պատահել. միայն, երևի, այդպէս է եղել Ալլահի կամքը և իմ ճակատագիրը և ես իբրև բարի մուսուլման, պէտք է հնազանդեմ ճակատագրիս: Նա առաջարկեց ինձ, իբր պարզև իր կողմից, չորս հարիւր թուման, որն ես մերժեցի:

—Իսկ կինդ, Փաթման:

—Փաթմային Իմամ Ջուման արդէն քեաբին էր կայել իր որդու հետ, իմ քեաբինի փողն լաւ մարսելու համար:

—Դէ, գնայիր, դիւանին գանգատ տայիր, Շահին արդ ²⁾ անէիր:

—Այդ բոլորն փորձեցի. մի փոքր գումար էլ, որ դեռ մնում էր մօտս, այն փողերից, որ Մէքքէ գնալիս հայրս տուել էր ինձ, ծախսեցի, բայց անօգուտ. ո՞վ Իմամ Ջումային թողած, իմ կողմն պէտք է բռնէր: Շահին էլ մի գեղեցիկ աղախին փէշքէշ արեց և ամեն բան վերջացաւ. քիչ էր մնում, բանտը նստեցնէին ինձ: Յմբողջ 5 տարի դատ վարեցի. խեղճ մայրս, ցաւին չը դիմանալով, մեռաւ: Ախ, հայր, հայր, ինչ բերիր դու մեր գլխին քո միամտութեամբ:

Եւ Սէլիմի այտերի վրայով գլորուեցին արտասուելի մի բանի կաթիլներ. դարձեալ խորասուզուեց իր մտքերի մէջ. գլուխը քաշ արած մտածում էր և Իբրահիմը, բայց շուտով ձեռքը դնելով ընկերի ուսի վրայ, փիլիսոփայօրէն ասաց. «ճակատագիրը անկարելի է ջնջել. փառք Փեղամբարին. յոյսդ Ալլահից մի կտրիլ:

¹⁾ Բացի քեաբինի օրինաւոր չորս կնոջից, մուսուլմանները իրատեղ ունեն և օրդա, հարճ պահել. օրդային անլի հեշտ է արձակել, քան քեաբինաւոր կնոջ: ²⁾ Ինգիրք, աղերսագիր:

ասած է՝ մի առուից, որ ջուր է գնացել, էլի ջուր կը գնայ և չի ցամաքի։ Բայց այս ինչ զարմաղալ է. Ալլահ, Ալլահ, ինչ է պատահել։

Եւ երկուսն էլ գաւազանները վեր առնելով վազեցին դէպի խիաբանի ծայրը, որտեղ մեծ ազմուկ ու իրարանցում էր նկատուում։

II

«Սալաւաթ, սալաւաթ, եա Ալի, մահ ջհուգներին» — ահա այն աղաղակները, որոնք լսում էին ամբոխի ժխորի մէջ։ Խառնիճանդանճ ամբոխի առաջից վազում էին օտնաբարձիկ երեխաներ և փոքր քարեր իրանց փեշերի մէջ ածած «ջհուգ, ջհուգ» ասելով ոստոստում էին. ապա դալիս էին սէյիդներ, թալաբաներ և մօլլաներ. մի բանի դարվիշ ևս, մազերնին դզգզուած, չանագները ¹⁾ ուսերնին ձգած, տապարները շարժելով, «եա հակ, եա հու» գոռումներով թնդացնում էին օդը։ Ամբոխը գնալով-գնալով ստուարանում էր։ Մօտակայ փողոցներից վազում էին, փողոցի վրայ դռները բացում էին և ամեն մարդ հարցնում էր. «ինչ խաբար է. ինչ է պատահել»։ «Ջհուգ-քուշան» է, պատասխանեց մի սէյիդ և այս խօսքի վրայ յանկարծ հարիւրաւոր բերաններից, գայլի օռնոցի նման լսուեց մի ընդհանուր գոռոց՝ «ջհուգ-քուշան, ջհուգ-քուշան»։

—Սալաւաթ, սալաւաթ, նորից թնդաց օդը։

Յանկարծ լուռութիւն տիրեց. ամբոխը կանգ առաւ խիաբանի մէջ տեղ. մի սէյիդի կապոյտ փաթոթաւոր գլուխը երևաց մի դռան սաքուի վրայ և ամենքի աչքերը դէպի նրան ուղղուեցին։

—Մուսուլմաններ, պոռաց սէյիդը, լսեցէք. տեսնում էք այս ջհուգ աղջկան. սա «միւրքաղ» ²⁾ է, սա

¹⁾ Կամ քեաշկիւլ։ ²⁾ Ով իսլամութիւն ընդունէ և ապա ուրանալ, նա միւրքաղ է, արժանի մահուան։

ընդունել է իսլամը, այժմ ուրանում է. ինչ է սրա պատիժը:

—Մահ, ոռնայ ամբոխը, բարկոժ պէտք է անել:

—Բայց սպասեցէք, շարունակեց սէյիդը, շարիաթը կնոջ վերաբերմամբ մահուան պատիժ թոյլ չէ տալիս. նրան պէտք է յաւիտեան բանտարկել և ամեն օր, նամազի ժամանակ, գանահարել. սակայն գուցէ նա յետ դառնայ իր անօրէն գէնից. գուցէ այս անիծեալ Ղհուգներն են նրան խելքից հանել. տաննէք սրանց աղայի մօտ և սպասե՛ք թէ ինչ ֆէթվա կը տայ աղան¹⁾:

—Գնանք աղայի մօտ, գնանք աղայի մօտ—պոռայ ամբոխը. մնւումաւ Ղհուգները համարձակում են նախատել իսլամի կրօնը, մեր շարիաթը. մահ նրանց, ժամանակ է «Ղհուգ-քուշան» սարքել:

Եւ նորից «սալաւաթ, սալաւաթ» կանչելով, սոսկալի ժխորի և աղմուկի մէջ, մուսուանդ ամբոխը շարունակեց իր ճանապարհը, բայց, յանկարծ, կարծես մի խոչընդոտի հանդիպելով, կրնկի վրայ յետ դարձաւ և մի րոպէում այնպիսի շփոթութիւն ու իրարանցում պատահեց, ու փախչող փախչողի եղաւ որ, ինչպէս աւոււմ են, շունը տիրոջ չէր ճանաչում:

«Հարամզադաներ, փեղէր-սուխտաներ, այս ինչ աղմուկ է, որ բարձրացրել էք. հէնց այժմ Շահը կերևայ. ճանապարհ բացէք. խփէք դրանց վզակոթերին», —լսուեց մի խրոխտ և թնդալից ձայն, որ ստիպեց շատերին փախուստ տալ. ճիպտաները, գաւազանները աջ ու ձախ թափւում էին սրա նրա գլխին. «վայ աչքս, վայ գլուխս, վայ ուսս» աղաղակները խառնւում էին երեխաների ու կանանց վայնասունի հետ:

Հրաման արձակողը, իրարանցումն առաջ բերողը թէհրանի Բէգլար բէգին²⁾ էր, որ վրայ էր հասել ֆէրրաշներով, լսելով աղմուկ և, զարհուրած՝ մնացել էր,

1) Ֆիթվա—վճիռ, իսկ աղա բառով սովորաբար հակացում է կրօնապետը: 2) Ոստիկանապետ:

տեանելով որ ճանապարհը բռնուած էր ամբօխով: Ամեն
 րոպէ կարող էր փչուել պալատից Շահի ելքը ծանու-
 ցանող շեփորը և վայը եկել տարել էր Բէգլար բէգուն,
 եթէ Շահի հանգիստաւոր գնացքը որևէ խոչընդոտի հան-
 դիպէր ճանապարհի վրայ. Բէգլար բէգին կարծես ար-
 դէն զգում էր իր ոտների վրայ Փալախկայի հարուած-
 ները, որոնց, անպատճառ պէտք է ենթարկուէր, եթէ
 Շահը վրայ հասնէր: Այդ պատճառով Բէգլար բէգին
 ձին քշելով, անդադար յորդորում էր Ֆէրրաշներին և
 շաթիրներին ցրուել ամբօխը. Ֆէրրաշները, նրա առա-
 ջից գնալով, աջ ու ձախ ճիպոտի հարուածներ հաս-
 ցնելով սրա նրա գլխին, ճանապարհ բացեցին ամբօխի
 միջով, մինչև հասան աղմուկի կենտրոնը և Բէգլար
 բէկու առաջ հետևեալ տեսարանը պատկերացաւ: Գետ-
 սի վրայ չորած էր և ձեռները դէպի երկինք բար-
 ձրացրած մի ծերունի. երկար, բուխարէ մերթուց գըլ-
 խարկը ընկած էր նրա առաջ. գլուխը ածիլած էր, ե-
 րեսը արիւնաթաթախ, մօրուքը, որ հասնում էր մին-
 չև Գօտին՝ գզգզուած էր: Գօտին բացուած, կուրծքի
 վրայ, աջ կողմին, գորշ զատաքից կարած արխալուղի
 վրայ կարուած էր մի կլոր կարմիր կտոր, որից իսկոյն
 կարելի էր իմանալ, թէ նա հրէայ է, «չհուգ» է. այդ-
 ցոյց էր տալիս և դէմքի նուրբ գծագրութիւնը: Մե-
 րունին, ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իր ուսե-
 րին, մէջքին, երեսին անդադար տեղացող հարուած-
 ներին և ապտակներին, այլ անմուռնչ, աղերսախառն
 նայուածքով նայում էր հասարակութեան և հեծեծում:
 «աման, աման, ձեր մարգարէի խաթրին խնայեցէք. աղ-
 ջրկանս ձեռք մի տաք»: Եւ ձեռքով ցոյց էր տալիս
 գետնի վրայ պզգած մի կնոյ, որ ամբողջովին փաթաթ-
 ուած էր չարչաւի մէջ և որի չորս կողմը կանգնած
 էին մի քանի սէյիդներ ու մօլլաներ, չրջանակ կազմե-
 լով. երևում էր, որ կինը լացում էր, որովհետև ու-
 սերը շարժւում էին, ինչպէս շարժւում են հեծկտան-
 քի ժամանակ: Մերունու կողքին երեսի վրայ գետնին

ընկած էր մի երիտասարդ, որ ամեն անգամ, երբ գլուխը բարձրացնում էր և որևէ շարժում էր անում, իսկոյն հայհոյանք, թուրք, հարուած տեղում էին նրա վրայ. նրա դէմքը արտայայտում էր խորին կսկիծ, երևում էր, որ նա գրեթէ անզգայ էր դարձել և անտարբեր էր ամբոխի իր վրայ թափած հարուածներին, հայհոյանքներին: Չը նայելով որ դէմքը թաթախուած էր փոշու մէջ և ուռած՝ ստացած հարուածներից, բայց գծագրութիւնը և հազիւ բուսած ընչացքը ցոյց էին տալիս, որ նա գրեթէ մի պատանի է, հազիւ 20—22 տարեկան. նրա կրծքից ևս կպցրած էր սիմբուլական կարմիր նշանը և երբեմն լսում էր նրա կրծքից խուլ հառաչանք:

—Ինչո՞ւ էր այս մարդկանց բռնել, ինչու էր ծեծում սրանց, ինչու է լացում այս կինը—պոռաց Բէգլար բէգին. փեղէր-սուխտաներ, միթէ Շահը մեռել է, միթէ դիւան չը կայ: Ֆէրրաշներ, ցրուեցէք այս ամբոխը:

—Սպասիր, խան, առաջ եկաւ մի ծերունի սէյիդ. այս բոլորը կատարուում է աղա իմամ Զումայի հրամանով: Այս կինը—և մատով ցոյց տուեց գետնի վրայ պպզած կնոջ—ահա այս սէյիդի կինն է, քեաբինի կինը. բայց այս մուռտառ ջհուդները փախցրել են նրան և գլխից հանել ու ջհուդ դարձրել. նրանց պատիժը մահ է:

—Ճշմտրիտ է ասածը, ջհուդ,—դարձաւ Բէգլար բէգին ծերունի հրէային. վեր կաց, պատմիր տեսնեմ, ինչ ես ասում:

Ծերունին կռացաւ, վերցրեց գլխարկը, և գլխին դնելով, ոտքի կանգնեց ու խոր գլուխ տալով, ասաց.

—Խան, քո գլուխդ վկայ, Շահի ազիդ գլուխը վրկայ, այդպէս չէ. այս աղջիկը, Եսթերը, իմ մինուջար զաւակս է, այս զուլիդ¹⁾—և ծերունին ցոյց տուեց

¹⁾ Դուլ—սարուկ. փոքրերը մեծերի հետ խօսելիս, այսպէս են անսահման իրանց:

մատով դեմնի վրայ դեռ ընկած պատանուն—նշանածն է. շուտով հարսանիքը պէտք է լինէր, բայց մեր թաղի հարեան այս սէյիդը հինգ օր սրանից առաջ ուժով իրանց տունն է բաշում աղջկան, երբ նա աղախնի հետ փողոցով անցնում էր, և պահում: Երէկ երեկոյեան, դուռն բաց դռնելով, աղջիկս կարողանում է փախչել և վերադառնալ տուն, և երբ մենք պատրաստուում էինք դալ ձեզ գանգատի, յանկարծ թափուեցին մեր վրայ Իմամ Ջումայի մարդիկը և մեզ թակելով, հայհոյելով դուրս քաշեցին, ասելով, որ իբր մենք մուսուլման կին ենք փախցրել. ծեծելով, հայհոյելով, թքելով բերին մինչև այստեղ. միթէ մենք Աստծու ստեղծած չենք, միթէ մենք Շահի հպատակ չենք:

—Սուտ է խօսում այդ անօրէն ջհուդը, դուռաց հրէայ աղջկայ գլխին կանգնած մի երիտասարդ սէյիդսա իմ քեաբինաւոր կինս է, սա մուսուլման է. ահա թող մօլլա Գեազիմը վկայի:

—«Աշադան-Ալլահ»¹⁾, առաջ գալով վկայեց մօլլան աչքերը խօր ընկած, գաւազանի վրայ յենուած, թասբէհը²⁾ ձեռքին բռնած մի ծերունի. ես եմ սրանց քեաբինը կտրել, ես եմ «քեալմէի շահադաթը»³⁾ լսել այս ջհուդ աղջկայ բերանից, զարմանում եմ, որ այդ դինսը ջհուդը փոխանակ ուրախանալու, տխրում է. փառք տուր, ջհուդ, Ալլահին, որ աղջիկդ ջհաննամի փայ դաունալու, բհեշդի⁴⁾ փայ պէտք է դառնայ:

—Խան, երդուում եմ մեզ Ստեղծողով, որ մի է, մօլլան սուտ է խօսում. աղջկանս վախեցրել են, թէ կը սպանեն, եթէ չը կրկնի, ինչ որ իրանք ասում են և քեաբինն էլ իրանք են կատարել զօռով. քեզ երդուեցնում եմ Շահի ջրգդայով⁵⁾, վերահասութիւն գործիր և այն ժամանակ կը տեսնես, որ ասածներին մէջ մի զարրայ⁶⁾ սուտ չը կայ. հազրաթ Մուսան⁷⁾ գլխիս

1) Վկայ է Աստուած: 2) Տէրողորմեայ. 3) Հանգանակ հաստոր. 4) Արքայութիւն: 5) Բազ. 6) Նշանախեց: 7) Մովսէս մարգարէն:



224 7A-1660

խոսով կենայ, ինչ տուր թխքա-թխքա¹⁾ անեն, եթէ տուտ դուրս գամ: Եսթեր, զաւակս, պատմիր խանին եղելութիւնը:

Բէգլար-բէգին շուարած մնացել էր. յանձնել աղջկան հօրը, անկարելի բան էր. այդ կը նշանակէր գրգռել Իմամ-Ջումայի բարկութիւնը և մեծ վտանգի ենթարկել հրէական թաղը, մանաւանդ որ սովորական ջհուդ-քուշանի օրը մօտենում էր. թոյլ տալ որ սէյիդները տանեն աղջկան, այդ ևս անկարելի էր, որովհետեւ հրէաները կարող էին դիմել Շահին. վերջապէս, անգլիական դեսպանը կարող էր միջամտել և խնդիրը կարող էր շատ բարդուել:

Այդ միջոցին յանկարծ լսուեց շեփորի ձայնը. «Շահը գալիս է, Շահը գալիս է», լսուեց ամեն կողմից: Բէգլար-բէգին զարհուրեց. բոպէապէս նա վճռեց իր անելիքը: «Մնա, շուտ—հրամայեց նա,—ջհուդներին և աղջկան տարէք աղայի տունը և այնտեղ սպասեցէք ինչ. հէնց որ գըբլէյի-ալէմը²⁾ կ'անցնի, ես կը գամ և աղայի ներկայութեամբ վերահասութիւն կը տանք գործին. դուք էլ, աղա սէյիդներ, գնացէք աղայի մօտ»:

Դառնալով ապա իր կողքին կանգնած Սէլիմ շաթիրին, նա մի քանի խօսք փսփսաց նրա ականջին, և ապա, բարձրաձայն ասաց.

—Հաջի Սէլիմ, տար ջհուդներին աղայի տունը և հսկիր, որ նրանց ոչ ոք չը նեղացնի. այժմ հեռացէք ամենքդ, կորէք. քչեցէք ամենքին:

Ֆէրրաշների, շաթիրների ճիպոտները նորից բարձրացին օդի մէջ և սկսեցին տեղալ ամբոխի գլխին: Այն միջոցին, երբ Սէլիմ շաթիրը հրամայեց գետնի վրայ ընկած երիտասարդ հրէային վեր կենալ և հետեւել իրան միւս հրէաների հետ, երբ ծերունի հրէան բռնեց Եսթերի ձեռքից, երիտասարդ սէյիդը մօտեցաւ երիտասարդ հրէային և ասաց.

1) Գտար-կտոր: 2) Աշխարհի աղօթարան:

—Եթէ իմ կնոջ մօտենաս, երեսին նայես, տեղն ու տեղը կը սատկեցնեմ քեզ, մուռտառ ջհուդ:

Հրէան ոչ մի պատասխան չը տուեց. կարծես նա չը հասկացաւ, նոյն իսկ չը լսեց սէյիդի ասածը, այլ մեքենայաբար հետևեց շաթիրին:

Շեփորը նորից վշուեց, այս անգամ աւելի զօրեղ և աւելի թնդալից. դա նշան էր, որ արեգակնափայլ Շահը պալատի դարպասից դուրս գալով, իր մուքարէք¹⁾ ոտքը դրել էր ձիի ասպանդակի մէջ: Նորից ճիպօտները, գաւազանների հարուածները տեղացին աջ ու ձախ ամբօխի վրայ. շաթիրները շարուեցին իրանց տեղերը և մի ըոպէտով գերեզմանային լուծիւն տիրեց. ամբօխը, խիաբանի երկու կողմին, պատերի տակ շարուած, շունչը փորը գցած, սպասում էր. շատերը շաապ-շտապ հագնում էին իրանց շուքբաների և արանների թեքերը²⁾:

Բէգլար-բէգին մի վերջին հայեացք գցեց ամբօխի վրայ. նրա սիրաը թրթուում էր վախից. «ողորմած Աստուած, տուր անփորձ անցնել այս ըոպէն», մրմնջում էր նա: Նա լաւ գիտէր, որ բողոքաւորները, հարստահարեալները, միջոց չունենալով իրանց արզը³⁾ հասցնել Շահին, այդպիսի օրերն են ընտրում Շահի առաջը կտրելու և իրանց գանգատը անելու. վայն եկել տարել է Բէգլար-բէգուն, եթէ Շահը վատ տրամագրութեան մէջ լինի. եթէ օտքերը Փալախկայի չարժանանան, յամենայն դէպս գրպանը սաստիկ կը տուժէ. մի քանի հարիւր, գուցէ և հազար էշրէֆիներ⁴⁾ պէտք է մատաղ անել Շահի գլխին և սագրազամին: Սակայն նա կասկածելի ոչ ոքի չը նկատեց ամբօխի մէջ. բացի դրանից նա ամեն միջոց ձեռք էր առել. իր Ֆէրրաշները պատուէր էին ստացել հսկել, որ ոչ ոքի չը թո-

1) Օրհնեալ, շնորհաւոր. 2) Սովորութիւնը պահանջում է, որ երբ փոքրը ներկայանայ մեծին, ի նշան խորին յարգանքի, վերարկուի թեքերը պէտք է հագած լինի և ոչ վերարկուի մէջ փաթաթուած: 3) Կնդիրք: 4) Ոսկի:

զեն մօտենար: Այնուամենայնիւ Բէզլար-բէզին հան-
գարտ չէր և հոգին խռոված էր. գիշերը վատ երազ-
ներ էր տեսել և ժամանակ չէր ունեցել գնալ երազա-
հան միրզա Դարաբէին հարցնելու: «է՛հ, մտածեց նա,
ինչ որ զըամէթ ¹⁾ է, այն կը լինի»:

Երրորդ անգամ հնչեց շեփորը և Դարը-Ալմասիէի
(ալմաստի դուռ) անկիւնից երևաց հանդիսաւոր գնաց-
քի ծայրը:

III

Ամենից առաջ գալիս էին զամբուրակչիները ²⁾ ուղ-
տերի վրայ նստած և զամբուրակիները առաջին դրած.
ապա զուռնա-նաղարէն ³⁾: Նրանց հետևում էին հարիւ-
րաւոր ֆէրրաշներ, ճիպոտները ձեռքին և գոռալով.
«տո՛ւր բաշ, բրօ, բրին» ⁴⁾. ապա գալիս էին շաթիրները
կարմիր մահուդի հագուստով, խայտաճամուկ փետրա-
ւոր գլխարկներով, արծաթեայ թօփուզներով և դեղին
լապչիներ հագած: Շաթիրներից յետոյ միւսխօռնե-
րը ⁵⁾ «եղակով» ⁶⁾ տանում էին Շահի նշանաւոր արար
և թիւրքմէն նժոյգներից մի քանիսը, զարդարուած
թանկագին մետաքսեայ զինփուշով ⁷⁾, ընդելուզուած
մարգարտով, սկէ բախտով ⁸⁾. մի քանիսի ճակատին
բախտի մէջ փայլում էր ադամանդ կամ մի այլ գո-
հար—զմրուխտ, յակինթ: Նժոյգների ազինները ներկուած
էին ծիրանի գոյն՝ արքայական նշան: Եղակներից յե-
տոյ մի ամբողջ տարածութիւն բաց էր մնացած: Եւ
նորից սկսում էր գնացքը միրզազարներով (դահիճ-
ներով), որոնց կարմիր հագուստը, ձեռքին բռնած տա-
պարները և մետաքսէ պարանները իսկոյն որոշում էին
նրանց պաշտօնը—տանուարի հարուածով կամ պարանի

3

1) Ճակատագիր: 2) Զամբուրակ, փոքր թնդանօթներ, տանելի ուղ-
տերի վրայ, զամբուրակի—թնդանօթածիք: 3) Զուռնի, թմբուկի ամբողջ
սարքը: 4) Հեռու կանգնիր, գնա, կորիր: 5) Ախոսապետ: 6) Հետևակ
7) Ծածկոց թամբի, 8) Սարք—տանձ:

կապով տեղնուտեղը պատժել այն յանդուգն անձին, որ կը համարձակէր իր վրայ գրգռել գըբլէի-ալէմի (աշխարհի աղօթարանի) բարկութիւնը: Դահիճներէց յետոյ ընթանում էին խառ փիշխըղմէթները ¹⁾, թիրմաշալի հագուստներով: Ապա ծանրաքայլ գալիս էր «վէզիբը թէշրիֆատը» ²⁾—Ջահիր-Դովլէն, պարսիկ հին մուսուտօֆիների պալատական հագստով—երկար թիրմա նուրբ շալի վերարկուով, եզրերը ընդելուզուած մարգարիտներով և մարգարտեայ ծոպերով, գլխին դրած նոյնպէս շալի փաթոթ, գօտիի մէջ խրած՝ զալամդան ³⁾ և ձեռքին բռնած ոսկէ թօփուղ: Նրան հետևում էր արդէն Շահի ձիի առաջից մեծ վիզիւր ծերունի Հաջի Միրզա Աղասին, թիրմա շուքբան հագած, եռանկիւնեայ բուխարէ մորթի երկար գլխարկը ծածկած և սպիտակ ներքնավարտիքով և կանաչ սրածայր չմշկներով ու մի երեսնեայ դաւաղան ձեռքին բռնած: Վերջապէս, մի հիանալի չքեղ սպիտակ նժոյգի վրայ նստած երևաց Մահմէդ-Շահը, աշխարհի աղօթարանը. ժողովուրդը մինչև գետին գլուխ էր ծռում ամեն անգամ, երբ Շահը նայում էր այս և այն կողմը. ձին ամբողջովին կորած էր ակներով ընդելուզուած ոսկէ րախտի մէջ, իսկ ճակատին փայլում էր մի խոշոր ադամանդ. ասպանդակները համակ ոսկուց էին: Ինքը Շահը հագնուած էր այնպէս, ինչպէս հագնում էին իր պապ Յաթալի-Շահը և իր հայր անուանի Աբբաս-Միրզան: Գլխին դրած էր մորթէ եռանկիւնի, բայց կարճ քուլահ ⁴⁾, որի մէջ տեղ, ճակատին պնդացրած էր փոքրիկ ջրգգան, շահութեան նշանը. դա մի շարք խոշոր ադամանդներից շինած առիւծի և արեգակի—Շիր ու Խուրշուդի պատկերն է: Թանկագին սամուր բիւրքի ⁵⁾ տակից երևում է թիրմա շալի բաճկոնակ, որի վրայ կապած էր լայն թիրմա գօտի, որից կախ էին ընկնում և եռուի պէս խոշոր մե-

1) Պալատական կամերպէրներ: 2) Մեծ արարողապետ: 3) Գրչաման: 4) Գլխարկ, փափախ: 5) Մուշուակ:

ծուծեան մարգարիտների երկու ծօպեր, այդ գօտու մէջ իրուած էր արքայական թուրը, պատեանը ամբողջովին ադամանդից, յակնթից, զմրուխտից շինած: Թևքին կապած ունէր սակէ բաղպաններ, նոյնպէս խոշոր գոհարներով բանուած, օտքին հագած ունէր զինուորական կամ սէֆերի (ճանապարհորդական) երկար կօշիկներ: Դէմքը հիւանդօտ էր. մօրուքը, հակառակ իր պապի և հօր սովորութեան, երկար չէր թողած. մազերը խինայած էին, ինչպէս և եղունգները:

Ամբօխի երկրպագութիւններին նա ոչ մի նշանով չէր պատասխանում: Երբեմն-երբեմն նրա դէմքի վրայ երևում էր քմծիծաղ. Ձիի երկու կողմից գնում էին դարձեալ խաս փիշխըղմէթները, մի քանի մուստօֆիներ ¹⁾, ապա գալիս էին ղէյլանչիները, շերբէթչիները, ձիի վրայ նստած և իրանց պաշտօնին վերաբերեալ ամբողջ սարասով—սալք ու կարգով. նրանցից յետոյ գալիս էին թիկնապահ ձիաւորները կամ զարափափախները, օտքից գլուխ զինուած: Ապա գալիս էր մի ամբողջ կարաւան ջորիների, եախտաններով ²⁾, մաֆրաչներով, թամբալիտներով բեռնաւորուած:

Երբ Շահը մտեցաւ Ալմասիէ խիաբանի մեծ կամարաւոր դռան՝ Թօփիտանի մէյդանը մտնելու համար, նա դիմեց ծերունի մեծ վիզիրին և ասաց. «Ալթան, մուրախիսս ես ³⁾, այժմ գնա ձի նստիր»:

Սովորութեան համաձայն, մեծ վիզիրը և մեծ արարողագետը պէտք է ուղեկցեն Շահին օտքով մինչև քաղաքի դուռը, բայց Մահմէդ Շահը, որ իր մեծ վիզիրին աթա, հայր անունն էր տալիս միշտ, չէր կամենում ենթարկել ծերունուն յոգնածութեան, ուստի և ի նշան շահնշահական առանձին բարեհաճութեան, թօյլ չը տուեց նրան շարունակել: Հաջի-Միրզա-Աղասին խոր գլուխ տալով, համբուրեց Շահի փէշերը և յետ դար-

¹⁾ Պետական քարտուղար ²⁾ Սնդուկ ³⁾ Երբ մեծերը կամենում են արձակել իրանց ներկաութիւնից փաքրերին, ասում են «մուրախիսս» (աղատ ես):

ձաւ նստելու իր ձին, որ իր միրախօրը ետեւից բերում էր, բայց հազիւ ոտքը դրել էր ասպանդակի մէջ, որ յանկարծ տեղի ունեցաւ մի սարսափելի դէպք. տիրեց մի ընդհանուր իրարանցումն, որի մէջ լաւում էր մի-միայն «Ալլահ, Ալլահ» ձայները, իսկ յետոյ լսուեց Շահի խրոխտ և բարկացոտ աղաղակը. «Հաջի-Միրզա-Աղասի». ծերունին հեալով, «ղուրբան, զուրբան¹⁾, այստեղ եմ ասելով, վազեց առաջ:

Ճիշտ այն րօպէին, երբ Շահի ձին անցնում էր մեծ դռան կամարի տակով, յանկարծ ամբոխի միջից մի անծանօթ մարդ ցայտեց դռան սէքուի վրայ և ձեռքին բռնած մի թուղթ բարձրացնելով գլխի վրայ, պռռաց. «Լուրբան, արդ ունեմ. առ այս իմ կեանքն էլ, թող իմ արիւնը քօ վզին մնայ, եթէ ազալւթ²⁾ չանես իմ որբերին. դատ, դատ անիրաւ Բէգլարբէկու ձեռքից»: Եւ արտասանելով դատ, դատ խօսքերը, նա հանեց դօտու մէջ խրած մի փոքր դաշոյն և կոխելով փոքրի մէջ, ընկաւ գետին, ձեռքերը պարզած, երեսի վրայ:

Շահը լաւ տեսաւ, թէ ինչպէս մարդի փորոտիքը, աղիքը թափուեցին, և ձեռքով աչքերը ծածկեց. ձին խրտնեց և քիչ էր մնում վայր գլորի Շահին, եթէ միրախօրները վազելով, չը բռնէին սանձից. Շահը հասկացաւ, կատարուեց մէկը այն տեսարաններից, որ անխօսափելի են բռնապետական երկրներում. այդտեղ, բողոքաւորը, հարստահարուածը, երբ բոլոր ատեաններին դիմելուց, բոլոր դռները բաղխելուց յետոյ չէ կարողանում արգարադատութիւն դռնել, յոյսը կըտրում է այլ ևս մարդկային արդարութիւնից, նա դիմում է վերջին, յուսահատական միջոցին, բողոքի ծայրայեղ արտայայտութեան. նա անձնասպանութիւն է գործում Շահի կամ կուսակալի աչքի առաջ, իր արեան

1) Մինխտրները, պալատականները Շահին դիմելիս՝ «Ձեռք Մեծութիւն» ասելուտեղ, ասում են «ղուրբան», մատա՛ղ: 2) Արդարադատութիւն:

պատասխանատուութիւնը նրանց վզին է գցում, որպէս զի արթնացնի նրանց խքճմտանքը, ստիպէ նրանց արգարութիւն անել և պատժել. հարստահարողին: Նա դրանով բողոքում է Ալլահին՝ Շահի ձեռից:

Անձնասպանը, թէև երեսի վրայ ընկած, բայց թուղթը դեռ ձեռքին բարձր բռնել էր:

«Ե՛հա, շուտ, տեսէք մեռել է, թէ կենդանի է, հրամայեց Շահը, առէք ձեռքից թուղթը և տուէք Հայի-Միրզա-Աղասուն»:

Փիշխըտմէթները վազեցին. թշուառը դեռ շնչում էր. փորոտիքը ամբողջովին դուրս էին թափուել. նա շնչում էր շարունակ. «Իմ տունս քանդողին տունը Ալլահն քանդի, Եզիզի, Եիմրի ¹⁾ ընկեր դառնայ»:

«Բէգլար-բէգին, ուր է փաղար-սուխտէ Բէլգար-բէգին, պոռաց յանկարծ Շահը, երբ մի ակնարկ ձգեց անձնասպանի ձեռքից առած և իրան մատուցած թղթի վրայ ու յանձնեց մեծ վիզիրին. տարէք այդ խեղճին մի տեղ, կանչեցէք շարրահ-բաշուն ²⁾ և թող բժշկի նրան»:

Ապա դառնալով մեծ վիզիրին, հրամայեց.

—Վերահասուցիւն տուր գործին և յայտնիր ինձ. այժմ ի՛նչ ես ասում, շարունակե՛նք ճանապարհը թէ ոչ:

—Ո՛չ, զուրբան. անկարելի է, լաւ նշան չէ այս բոլորը, պէտք է վերադառնալ պալատ, պատասխանեց մեծ վիզիրը:

Շահի դէմքը մթազնեց. աչքերի մէջ փայլեց մի րոպէ բարկութեան հուր, բայց, առանց առարկելու, դարձրեց ձիի սանձը, մեծ վիզիրը առաջը ընկաւ, և կանչելով Ֆէրրաշ-բաշուն, ասաց.

—Շղթայեցէք Բէգլար-բէգուն, տարէք պալատի բանտը, պահեցէք մինչև ինձանից նոր հրաման ստանալը: Խեղճ Բէգլար-բէգին, որ այդ րոպէին մկան ծակը

¹⁾ Ամենամեծ անէծքը, որ մի շիա մահմեդական կարող է տալ շիային. Եզիզը և Եիմրը Նմամ Հուսէյն և Հասանի հալածողներն ու սպանողն են եղել: ²⁾ Վիրարոժների գլխատոր:

հարիւր հազար թումանով կ'առնէր, կուչ եկած, անմտունչ սպասում էր իր ճակատագրին, ուստի երբ ֆէրրէշ-բաշին մտեցաւ շղթաներով, նա միայն արտասանեց.

—Ա՛խ, երազս կատարուեց.

Նորից շեփորները փչեցին և ներբիները, իմանալով Շահի անակնկալ վերադարձը, լեղապատառ վազեցին հարեմխանան՝ հսկելու կարգապահութեան վրայ:

Շահը շտապով վերադարձաւ պալատ և հազիւ իջաւ ձիուց ու մտաւ ներբին պարտեզը, որ հրամայեց. «Քաէք որտեղ որ է այդ փաղար-սուխտէ մունէջիմ բաշուն ու քաշ տալով բերէք այստեղ, մի տեսնեմ թէ այս ինչ ինչ որ էր, որ նա գուշակեց մեզ»:

Էշիկ-Աղասի բաշին¹⁾ վազեց կատարելու Շահի հրամանը, բայց մունէջիմ-բաշին, որ փորձով գիտէր, թէ որքան վտանգաւոր է Շահին ներկայանալ նրա բարկութեան առաջին րոպէներում, արդէն իր գլխի ճարը տեսել էր. կամենալով ազատել ոտքերը ֆալսխկայից, նա փախել բէստ²⁾ էր մտել Շահի ախոռատունը, մինչև որ անցնի Շահի բարկութիւնը և փորձանքը հեռանայ իրանից:

Այն րոպէին, երբ գօտին քանդուած ու օտնաբորիկ մունէջիմ-բաշին փախչում էր դէպի ախոռատունը և կարողացաւ գցել իրան այնտեղ, նա զարմացրով նկատեց, որ երկու հրէայ, մէկը ծեր, միւսը երիտասարդ և մի հրէայ աղջիկ, նոյնպէս լեղապատառ, վազում էին դէպի ախոռատունը և նրանց ետևից վազում էին մի շաթիր ու մի սէյիդ. վերջինս գոռում էր. «Բունեցէ՛ք, բունեցէ՛ք մուռտառ ջհուզներին»:

Բայց հրէաները, հեալով, քրտնած, արդէն կարողացան մտնել ախոռատունը, մանաւանդ որ շաթիր Սէյիմը շատ էլ եռանդ գործ չէր դնում հասնելու նրանց:

Հրէաները նոյնպէս բէստ էին մտնում Շահի ախոռատունը, ինչպէս և մունէջիմ-բաշին. այստեղ այլ ևս

1) Պալատական գլխարկայի տերու 2) Ապաստան:

ոչ դք, նոյն իսկ ինքը Շահը, չէր կարող հալածել նրանց
և նրանք ապահով էին:

Սէյիդը ստիպուեց քոռ ու փոշիման յետ գնալ,
իսկ Սէլիմ շաթիրը, ծիծաղելով նրա ետևից, ասաց.

—Սէլիմը դեռ շատ օյիններ կը բերի ազա Իմամ
Ջումայի գլխին:

Նա ուրախ էր, որ կարողանում էր իր վրէժը առ-
նել, միևնոյն ժամանակ մի քանի տասնեակ թուաման,
ի հարկէ կը ստանար ջհուգներից, որոնց նա հնարաւո-
րութիւն տուեց փախչել և բէստ մտնել Շահի ախո-
ռատունը: Նա կարողացել էր ճանապարհին փոփոխ
ծեր հրէայի ականջին, թէ ինչ պէտք է անել. այդ
միտքը յղացել էր հնարագէտ Բէգլար-բէգին: Սէլիմը
դեռ չը գիտէր վերջինիս գլխին հասած փորձանքը,
ուստի և ասաց. «Այժմ գնամարդ անեմ Բէգլար-բէգուն,
որ իր հրամանը ճշտութեամբ կատարեցի: Ո՛հ, որքան կը
կատաղի Իմամ-Ջուման, որ որսը ձեռքից ազատուեց»:

Երբ գլխաւոր միրախօրը եկաւ և արդ արեց Շա-
հին, թէ մունէջիմ-բաշին բէստ է մտել, նա յայտնեց
միևնոյն ժամանակ, որ ջհուգներն ևս բէստ են մտել
ախոռատունը:

Շահը քահ քահ ծիծաղեց և, դառնալով մեծ վի-
զիրին ասաց.

—Տեղն է, թող այժմ ջհուգների հետ քնի վեր
կենայ. ես իմ Աստուածս, լաւ պատժուել է միևնէջիմ-
բաշին. այդ նա չէր գուշակել, թէ չէ բէստ չէր մտնի.
այժմ նրա նամազը բաթըլ¹⁾ կը լինի:

Եւ աշխարհի աղօթարանը անցաւ իսլավաթխանէն,
ուր պատրաստուած էր նհարը²⁾:

ՇԱՀՐԻԱՐ

(Կը ռարուևակուի)

1) Մուսուլմանի համար նամազը բաթըլ է, անընդունելի է Ալլահին,
եթէ մուսուսա բանի պատահի նամազ անելիս: 2) նախածառը: